(b) հաճախորդների անունից պահպանվում են Ապահովագրվողի ապահով տնօրինման տակ, բայց ոչ այն հայտնի արժեթղթերը, որոնք Ապահովագրվողը պահպանում է հիշյալ հաճախորդների համար, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը կամ վնասը ծածկվում է համաձայն Ապահովագրական Հոդվածներ No. 1-ի և 8-ի:	(b) held by the Insured in safe custody on behalf of customers other than identifiable securities actually held by the Insured for said customers, except to the extent that such loss or damage is covered by Insuring Clause No. 1 and 8.
8. Որևէ մեկին մարմնական վնաս հասցնելու կամ Ապահովագրվողի սեփականությանը վնասելու սպառնանքով սեփականության հանձնման արդյունքում ծագած կորուստը, բացառությամբ այն դեպքերի, երբ	8. Any loss through the surrender of property as a result of a threat to do bodily harm to any person or to do damage to any property whatsoever of the Insured or otherwise except when:
(a) նման սպառնանքը իրականացվում է որևէ Աշխատակցի կողմից այլ Աշխատակցի համար ֆինանսական շահ ստանալու նպատակով և նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն, կամ	(a) such threat is perpetrated by an Employee with the intention to obtain an improper personal financial gain to such Employee and such loss is covered by Insuring Clause No. 1, or
(b) սեփականության հանձնումը տեղի է ունենում Տարածքի ներսում, որի ուղղակի արդյունք է հանդիսանում Տարածքի ներսում գտնվող անձի՝ Տարածքում ներկա գտնվող որևէ ֆիզիկական անձին մարմնական վնաս հասցնելու	(b) surrender of property occurs within the Premises as a direct result of a threat by a person within the Premises to do bodily harm to a person physically present within the Premises and such loss is covered by Insuring Clause No. 2, or except with respect to (a)

սպառնանքը և նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 2-ի համաձայն, կամ բացառությամբ վերոնշյալ (a) կետի, երբ ապահովագրված է Ապահովագրության հոդված 1-ով, կամ Ապահովագրության հոդված 10-ի ողջ սահմանաչափով՝ “Շորթում-սպառնալիքներ անձանց նկատմամբ” կամ Ապահովագրության հոդված 11-ի ողջ սահմանաչափով՝ “Շորթում-սպառնալիքներ գույքի նկատմամբ”, երբ այն հավելվածով կցվի այս պայմանագրին:	above, when covered under Insuring Clause 1, or to the extent covered under Insuring Clause 10., Extortion - Threats to Persons, and with respect to (b) above, when covered under Insuring Clause 1, or to the extent covered under Insuring Clause 11., Extortion - Threats to Property when added by endorsement to this Policy.
(c) սեփականության հանձնումը տեղի է ունենում Տեղափոխման ընթացքում, որի ուղղակի արդյունք է հանդիսանում տեղափոխող անձին կամ անձանց մարմնական վնաս հասցնելու սպառնանքը, եթե տեղափոխման սկսման ժամանակ Ապահովագրվողը նման սպառնալիքի մասին որևէ պատկերացում չի ունեցել և նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 3-ի համաձայն:	(c) surrender of property occurs during Transit as a direct result of a threat to do bodily harm to the transporting person or persons PROVIDED THAT when the transit was initiated, there was no knowledge by the Insured of any such threat and such loss is covered by Insuring Clause No. 3.
9. Ցանկացած կեղծիքի ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստը, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդվածներ No. 1, 4, 5 կամ 6-ի համաձայն:	9. Any loss resulting directly or indirectly from forgery, counterfeiting or alteration, except to the extent that such loss is covered by Insuring Clause Nos. 1, 4, 5 or 6.
10. Ճանապարհային չեկերի կամ ճանապարհային ակրեդիտիվների կեղծումից կամ փոփոխումից ծագած ցանկացած կորուստ, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն:	10. Any loss resulting directly or indirectly from forgery, counterfeiting or alteration of any travellers cheques or travellers letters of credit, except to the extent that such loss is covered by Insuring Clause No. 1.
11. Վաճառքի նպատակով Ապահովագրվողի տնօրինմանը հանձնված չվաճառված ճանապարհային չեկերի կորուստը, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդվածներ No. 1, 2, 3-ի համաձայն և նաև, եթե հետագայում տվյալ չեկեր վճարվեն դրանց թողարկողի կողմից իսկ Ապահովագրվողը այդ կորուստի համար օրենքով սահմանված կարգով	11. Any loss of unsold travellers cheques placed in the custody of the Insured with authority to sell except to the extent that such loss is covered by Insuring Clause Nos. 1, 2 or 3 and provided also that such cheques are later paid or honored by the Issuer thereof and the Insured is legally liable for such loss.

պատասխանատու լինի:	
12. Որևէ կորուստ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագում է որևէ գործիքներից, որոնք հանդիսանում են հետևյալը կամ կամ ենթադրվում են այդպիսիք հանդիսացող՝ կոնոսամենտներ, բեռնառաքման փաստաթղթեր, պահեստի ստացականներ, տրաստային ստացականներ, դեբիտորական պարտքի մուրհակներ, կամ ցանկացած այլ մուրհակներ, փաստաթղթեր, կամ ստացականներ, որոնք նման բնույթի են կամ ծառայում են միևնույն նպատակի, բացառությամբ այն չափի, որքանով նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված N.1-ով, կամ բացառությամբ որևէ նման գործիքի ֆիզիկական կորստի՝ այն չափի, որքանով նման ֆիզիկական կորուստը ծածկված է Ապահովագրական Հոդված N.2 կամ 3-ով:	12. Any loss resulting directly or indirectly from any items which are or purport to be bills of lading, shipping documents, warehouse receipts, trust receipts, accounts receivable, or any other bills, documents or receipts similar in nature or effect or serving a similar purpose, except to the extent that such loss is covered by Insuring Clause No. 1, or except for the physical loss of any such item to the extent that such physical loss is covered by Insuring Clause Nos. 2 or 3.
13. Որևէ կորուստ, որը ծագում է որևէ վարկային, դեբետային, վճարային, մուտքի, հանրային, անձը հաստատող կամ այլ քարտերի կիրառումից կամ ենթադրվող կիրառումից՝ լինեն դրանք թողարկված Ապահովագրվողի, թե որևէ այլ անձի կողմից թողարկված:	13. Any loss resulting from the use or purported use of any credit, debit, charge, access, convenience, identification or other cards, whether such cards were issued, or purport to have been issued, by the Insured or by anyone other than the Insured.
14. Շահույթի կամ եկամուտի ցանկացած կորուստ կամ աղավաղում, ներառյալ տոկոսների, շահաբաժինների, վճարների, կոմիսիոնների և այլնի կորուստը և աղավաղումը:	14. Any loss or deprivation of income or profits, including but not limited to loss or deprivation of interest, dividends, fees, commissions and the like.
15. Ֆինանսական կամ դեպոզիտորիական կազմակերպության (նաև դրա ստացողը կամ լուծարողը) ձախողման ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստը	15. Any loss resulting wholly or partially from the failure of a financial or depository institution (or its receiver or liquidator)
(a) վճարելու, վերադարձնելու կամ տրամադրելու ցանկացած ծավալներով իր կողմից պահվող գումարները կամ սեփականությունը, կամ	(a) to pay, return or deliver funds or property held by it in any capacity, or
(b) Ապահովագրվողին հատուցել ցանկացած կորուստի դիմաց, որոնց համար պատասխանատու են Ֆինանսական կամ դեպոզիտորիական կազմակերպությունը կամ դրա աշխատակիցները, բացառությամբ այն	(b) to reimburse the Insured for any loss for which the financial or depository institution or its employees are liable, except to the extent that such loss is covered by Insuring Clause No. 1.

դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն:	
16. Այնպիսի վնասներ (լինի դա տույժեր, տուգանքներ, պատժիչ, օրինակելի թե այլ), որոնց համար Ապահովագրվողը օրենքով սահմանված կարգով է պատասխանատվություն կրում, բայց ոչ ուղղակի հատուցվող վնասները, որոնք շնորհվում են երրորդ կողմին, գումարների կամ սեփականության դիմաց վերջինիս հատուցելու համար, որոնք փաստացի կորած են և իրենցից ներկայացնում են սույն Պայմանագրով ծածկված ուղղակի ֆինանսական կորուստ:	16. Any and all damages of any description (whether fines, penalties, punitive, exemplary or other) for which the Insured is legally liable, other than direct compensatory damages (but not multiples thereof) awarded to a third party to reimburse said party for funds or property actually lost which represent direct financial loss covered by this Policy.
17. Ցանկացած տեսակի անուղղակի կորուստներ.	17. Indirect or consequential loss of any nature.
18. Վճարներ և այլ ծախսեր, որոնք կատարվում են Ապահովագրվողի կողմից ապացուցելու կամ ապացուցել փորձելու համար, որ տվյալ կորուստը կամ կորած գումարը ծածկվում է սույն Պայմանագրով:	18. Costs, fees and other expenses incurred by the Insured in establishing, or attempting to establish, the existence of or amount of loss covered by this Policy.
19. Հայցը պաշտպանելու ժամանակ Ապահովագրվողի կողմից կատարված վճարներ և այլ ծախսեր, բացի իրավաբանական վճարներից և իրավաբանական ծախսերից, քանի որ դրանք փոխհատուցվում են, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 1-ում:	19. Costs, fees or other expenses incurred by the Insured in defending any claim except legal fees and legal expenses of outside counsel to the extent recoverable as indicated in General Condition No. 1.
20. Առևտրի ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած ցանկացած կորուստ բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1, 4, և 5-ի համաձայն:	20. Any loss resulting directly or indirectly from Trading, except to the extent that such loss is covered by Insuring Clause Nos. 1, 4 or 5.
21. Ցանկացած սեփականության կորուստը կամ վնասումը մաշվածության, աստիճանաբար վատացման, ցեցերի կամ այլ վնասատուների պատճառով:	21. Any loss of or damage to any property whatsoever by reason of wear, tear, gradual deterioration, moth or vermin.
22. Ցանկացած սեփականության կորուստը կամ վնասումը, որի ուղղակի պատճառ է հանդիսանում տայֆունը, փոթորիկը, ցիկլոնը, հրաբխային ժայթքումը, երկրաշարժը, ստորգետնյա իրդեհը կամ այլ բնական	22. Any loss of or damage to any property whatsoever resulting directly or indirectly from typhoon, hurricane, cyclone, volcanic eruption, earthquake, subterranean fire or other convulsion of nature and contemporaneous or

ցնցումներ, ինչպես նաև հրդեհը, ջրհեղեղը և դիակապտություն:	ensuing loss or damage by fire, flood or looting.
23. Պատերազմի, հարձակման, թշնամության կամ պատերազմանման գործողությունների /անկախ այն բանից, պատերազմ հայտարարվել է, թե ոչ/, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, բողոքի, զանգվածային իրարանցման, ռազմական դրության և նմանատիպ գործողությունների ուղղակի կամ անուղղակի արդյունքում պատճառված կորուստը կամ վնասը: Ցանկացած դատական գործի ժամանակ այս Պայմանագրի սահմաններում Ապահովագրվողն ինքը պետք է ապացուցի, որ իր կրած վնասը կամ կորուստը այս բացառությունների թվին չի պատկանում:	23. Any loss or damage which arises directly or indirectly by reason of or in connection with war, invasion, act of foreign enemy, hostilities or warlike operations (whether war has been declared or not), civil war, rebellion, revolution, insurrection, civil commotion assuming the proportion of or amounting to a popular uprising, military or usurped power, martial law, riot or the act of any lawfully constituted Authority. IN ANY CLAIM, and in any action, suit or other proceeding to enforce a claim under this Policy for loss or damage, the BURDEN OF PROVING that such loss or damage does not fall within this General Exclusion shall be upon the Insured.
24. Հետևյալ ուղղակի կամ անուղղակի պատճառներից ի հայտ եկած ցանկացած սեփականության կորուստը կամ վնասումը կամ դրանցից առաջ եկած ծախսերը՝	24. Any loss or destruction of or damage to any property whatsoever or any loss or expense whatsoever resulting or arising therefrom or any consequential loss or any legal liability of whatsoever nature directly or indirectly caused by or contributed to by or arising from:
(a) իոնային ճառագայթումներ, կամ ցանկացած միջուկային վառելիքի ռադիոակտիվության պատճառած աղտոտումից կամ միջուկային վառելիքի այրումից առաջ եկած միջուկային թափոնից, կամ	(a) ionising radiation or contamination by radioactivity from any nuclear fuel or from any nuclear waste from the combustion of nuclear fuel, or
(b) Ցանկացած պայթուցիկ միջուկային նյութերի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր տարրերից կամ էլ դրանց միջուկային բաղադրիչներից:	(b) the radioactive, toxic, explosive or other hazardous properties of any explosive nuclear assembly or nuclear component thereof.
25. Էլեկտրոնային տվյալների ներդրման, ձևափոխման կամ ոչնչացման արդյունքում պատճառված կորուստը, ներառյալ ծրագրերը, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն	25. Any loss resulting from the input, modification or destruction of electronic data, including programs, except to the extent that such loss is covered under Insuring Clause No. 1.
26. Որևէ կորուստ, որը ծագում է Ապահովագրվողին ուղարկված և նրա կողմից	26. Any loss resulting from instructions or messages sent to the Insured and received by or input by

ստացված, կամ Ապահովագրվողի կողմից իր համակարգչային համակարգեր կամ որևէ հեռատիպային տերմինալ, կամ հեռատպիչ, տեսատերմինալ, և այլն ներմուծված հրահանգներից կամ հաղորդագրություններից, բացառությամբ այն չափի, որով նման կորուստը ծածկված է Ապահովագրական Հոդված N.1-ով:	the Insured into its computer systems or into any teletype terminal, teleprinter, video display terminal or the like except to the extent that such loss is covered under Insuring Clause No. 1.
27. Որևէ կորուստ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագում է այն պատճառով, որ Ապահովագրվողը պատրաստել է (կամ չի կարողացել պատրաստել) որևէ փաստաթուղթ, որը հանդիսանում էր կամ պետք է որ հանդիսանար պոլիս, պայմանագիր կամ պայմանավորվածություն՝ ապահովագրության, վերաապահովագրության, կամ որևէ պարտավորության վերաբերյալ, որում Ապահովագրվողը հանդես է գալիս որպես գործակալ կամ գլխավոր կողմ՝ որևէ տեսակի ապահովագրության կամ վերաապահովագրության առնչությամբ, ներառյալ կնքելը (կամ չկնքել չկարողանալը) որևէ փաստաթուղթ, որը հանդիսանում էր կամ պետք է որ հանդիսանար պոլիս, սերտիֆիկատ, կովերնոտա, պայմանագիր կամ պայմանավորվածություն ապահովագրության կամ վերաապահովագրության պոլիսի վերաբերյալ, աննուփոփոխ կամ ինդոսամենտ, կամ պայմանագիր, կամ համաձայնագիր՝ ապահովագրության, կամ վերաապահովագրության վերաբերյալ, սակայն ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ, որ սույն Ընդհանուր Բացառությունը չի վերաբերվի պարզևի գումարների կամ հայցերի դիմաց վճարումներից հասույթի կորստին, երբ նման կորստի անմիջական պատճառը նման գումարների յուրացումն է աշխատակցի կողմից, երբ դա ծածկված է Ապահովագրական Հոդված N.1-ով:	27. Any loss resulting directly or indirectly by reason of the Insured having arranged (or having failed to arrange) any item which is or purports to be a policy, contract or binder of insurance or reinsurance or any liability arising out of the Insured's involvement whether as agent or principal with respect to insurance or reinsurance of any kind, including having issued (or failed to issue) any item which is, or purports to be, a policy, certificate, cover note, contract or binder of insurance or reinsurance policy, annuity or endorsement or agreement or treaty of insurance, reinsurance or suretyship, EXCEPT, however, that this General Exclusion shall not apply to loss of premium payments or the proceeds of claims payments when such loss is directly caused by the embezzlement of such payments by an Employee when covered under Insuring Clause No. 1.
28. Այն Սեփականության որևէ կորուստ, որը գտնվելիս է եղել որևէ պետական փոստային ծառայության խնամատարության տակ, բացառությամբ երբ այն ծածկված է Ապահովագրական Հոդված N.1-ով:	28. Any loss of Property while in the custody of any governmental postal service except when covered under Insuring Clause No. 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ	GENERAL CONDITIONS
1. ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	1. LEGAL FEES AND LEGAL EXPENSES
Ապահովագրողը կհատուցի Ապահովագրվողին նրա կողմից կատարած խելամիտ վճարները կամ ծախսերը, որոնք նախապես համաձայնեցվում են Ապահովագրողի հետ, Ապահովագրվողի դեմ սկսված դատական գործի կամ դատական այլ գործընթացի պաշտպանության համար, համաձայն որի Ապահովագրվողը հաստատում է, որ տեղի ունեցած գործողությունը կամ գործողությունները, իրադարձությունը կամ իրադարձությունները նրան սույն Պայմանագրով հատուցում ստանալու իրավունք կտան: Դատական գործի կամ դատական այլ գործընթացի պաշտպանության համար Ապահովագրողի կողմից կատարված իրավաբանական վճարները և իրավաբանական ծախսերը ենթարկվում են Ընդհանուր Պայման 8-ին Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցմանը:	Insurers shall indemnify the Insured against reasonable legal fees and legal expenses incurred and paid by the Insured with the prior approval of the Insurers in the defense of any suit or legal proceeding brought against the Insured, with respect to which the Insured establishes that the act or acts which have been committed, or the events which have occurred, would entitle the Insured to recover under this Policy. Legal fees and legal expenses paid by the Insurers in defending any suit or legal proceeding shall be applied subject to General Condition No. 6 to the reduction of the Aggregate Limit of Indemnity and the Sub-Limit for the applicable Insuring Clause.
Ապահովագրվողը պետք է Ապահովագրողներին տրամադրի վերոհիշյալ դատական գործի կամ դատական այլ գործընթացի սկսող կազմակերպության ծանուցագիրը և Ապահովագրողի պահանջով նրան ներկայացնի բոլոր դիմումների պատճենները և դրանց հետ առնչվող այլ փաստաթղթերը:	The Insured shall promptly give notice to the Insurers of the institution of any suit or legal proceeding referred to above and at the request of the Insurers shall furnish them with copies of all pleadings and other papers therein.
Եթե դատական գործի կամ դատական այլ գործընթացի ընթացքում գործողության բազմաթիվ պատճառներ են կասկածի տեղիք տալիս և օգտագործվում են Ապահովագրվողի դեմ, ապա սույն Պայմանագրով դրանք հավաքական կորուստ չեն համարվում: Այն իր մեջ ներառում է պատժիչ, հետևանք հանդիսացող կամ այլ չհատուցվող վնասները: Ապահովագրվողն իր սեփական միջոցներով պետք է կատարի նման գործողության կասկածելի պատճառների պաշտպանության համար գանձվող իրավական վճարները և իրավական ծախսերը:	If multiple causes of action are alleged in any such suit or legal proceeding some of which causes of action, if established against the Insured, would not constitute a collectible loss under this Policy, including without limitation claims for punitive, consequential or other non-compensatory damages then the Insured shall bear for its own expense the legal fees and legal expenses incurred in the defense of such alleged causes of action.
Եթե Ապահովագրվողի կրած կորստի գումարի չափը գերազանցում է սույն Պայմանագրով հատուցվող գումարի չափին, կամ եթե կարելի է կիրառել Ֆրանշիզա, ուրեմն համաձայն	If the amount of the Insured's loss is greater than the amount recoverable under this Policy, or if a Deductible is applicable, or both, the liability of the Insurers under the first paragraph of this General

Ընդհանուր Պայմանների առաջին բաժնի Ապահովագրողի պարտավորությունները սահմանափակվում են Ապահովագրվողի կողմից կատարված իրավական վճարների կամ իրավական ծախսերի համաձայն կամ Ապահովագրողի կողմից, ըստ որի սույն Պայմանագրով հատուցվող գումարը հավասարագոր է այդ գումարի չափին՝ գումարած չհատուցվող գումարը: Նման կերպ բաշխված գումարը կիրառվում է Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցման համար:	Condition is limited to the proportion of the legal fees and legal expenses incurred and paid by the Insured or by the Insurers that the amount recoverable under this Policy bears to the total of such amount plus the amount which is not so recoverable. Such prorated amount shall be applied in reduction of the Aggregate Limit of Indemnity and the Sub-Limit for the applicable Insuring Clause.
Ապահովագրողը իրավասու չէ ապահովագրելու Ապահովագրվողին իրավաբանական վճարների կամ իրավաբանական ծախսերի դիմաց նախքան դատական գործի կամ այլ դատական գործընթացի ավարտը:	The Insurers shall not be liable to indemnify the Insured for legal fees and legal expenses until after final judgment or settlement of any suit or legal proceeding.
Ապահովագրողը պարտավորված չէ իրականացնել սույն Ընդհանուր Պայմանի առաջին բաժնում նշված այս կամ այն դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը: Ապահովագրողի ընտրության ժամանակ Ապահովագրվողը թույլ է տալիս նրանց իր անունից կատարելու այս կամ այն դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը՝ Ապահովագրողի կողմից ներկայացվող իրավական ներկայացուցիչի միջոցով: Ապահովագրվողը Ապահովագրողին պետք է տրամադրի դատական գործընթացի պաշտպանության համար անհրաժեշտ ինֆորմացիա:	The Insurers may but are not obligated to conduct the defense of such suit or legal proceeding referred to in the first paragraph of this General Condition. At the Insurers' election the Insured shall permit the Insurers to conduct the defense of such suit or legal proceeding, in the Insured's name, through legal representatives of the Insurers' selection. The Insured shall give all reasonable information and assistance that the Insurers shall deem necessary to the defense of such suit or legal proceeding.
Դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանության համար Ապահովագրողի կողմից վճարվող իրավական վճարները կամ իրավական ծախսերը կիրառվում են Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցման համար:	Legal fees and legal expenses paid by the Insurers in defending any suit or legal proceeding shall be applied to the reduction of the Aggregate Limit of Indemnity and the Sub-Limit for the applicable Insuring Clause.
Եթե Ապահովագրվողը նախընտրում է, որ իրավաբանական վճարները կամ իրավաբանական ծախսերը կատարի Ապահովագրողը նման իրավաբանական վճարների կամ իրավաբանական ծախսերի իրենց համամասնական չափը գերազանցելով, ապա	If having elected to defend the Insurers pay legal fees and legal expenses in excess of their proportionate share of such fees and expenses the Insured shall promptly reimburse the Insurers for such excess.

Ապահովագրվողը պետք է հատուցի ավելացած գումարը:	
Ապահովագրվողը չպետք է հրաժարվի Ապահովագրողի կողմից իրականացված դատական գործի կամ այլ դատական գործընթացի կարգավորումից:	The Insured shall not unreasonably withhold consent to a settlement by the Insurers of any suit or legal proceeding.
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ	2. CHANGE OF CONTROL OF THE INSURED
(a) Լուծարում և այլն	(a) Liquidation, Etc
Ապահովագրվողի ինքնական կամ հարկադրական լուծարման, Իրավահաջորդի կամ Կառավարչի նշանակման, կամ որևէ Լուծարային Գործընթաց կամ պարտատերերի հետ համաձայնություն սկսելու դեպքում, կամ եթե Ապահովագրվողի նկատմամբ վերահսկողությունը ստանձնվի որևէ Կառավարության կամ Կառավարական մարմնի կամ գերատեսչության կողմից, սույն Պայմանագիրն անմիջապես կդադարի որևէ ծածկույթ ապահովել որևէ տեսակի կորստի համար, որը համապատասխանաբար հայտնաբերվել և ծանուցվել է Ապահովագրողին:	In the event of the liquidation of the Insured, either voluntary or compulsory, or the appointment of a Receiver or Manager, or the entering into of any Scheme of Arrangement or composition with creditors, or the control of the Insured being taken over by any Government or by officials appointed by any Government or Governmental Authority or Agency, then this Policy shall immediately cease to afford any coverage of any kind for loss subsequently discovered and notified to the Insurers.
Ինչպես վերևում է նշված, Հարցաթերթիկում կամ Ծրագրում նշված Ապահովագրվողի դուստր-ծեռնարկության լուծարման և այլնի դեպքում, այս Պայմանագիրը միանգամից կդադարի հետագայում հայտնաբերված և Ապահովագրողի ուշադրությանը ներկայացվող վերոհիշյալ կազմակերպության հետ որևէ կերպ առնչվող ցանկացած տեսակի կորստի ապահովագրումը:	In the event of the liquidation, etc., as aforesaid, of any subsidiary of the Insured named in the Proposal Form and the Schedule, then this Policy shall immediately cease to afford any coverage of any kind for loss subsequently discovered and notified to the Insurers which arose in any manner from such subsidiary.
(b) Ակտիվների Փոխանակում կամ Բաժնետոմսերի Սեփականություն	(b) Change of Assets or Share Ownership
Ապահովագրվողը պետք է միանգամից ծանուցի Ապահովագրողին այլ բիզնեսի հետ միաձուլման կամ համախմբման, գնման, փոխանցման, գրավի, ակտիվների կամ բաժնետոմսերի այն վաճառքի մասին, որոնք սեփականության կամ վերահսկման մեջ փոփոխության պատճառ կարող են դառնալ: Ինչպես կիրառվում է այս Ընդհանուր Պայմանի մեջ, վերահսկում նշանակում է քվեարկող բաժնետոմսերի սեփականությամբ Ապահովագրվողի ղեկավարությունը կամ քաղաքականությունը որոշելու լիազորությունը: Քվեարկող բաժնետոմսերի սեփականության մեջ առկա որևէ փոփոխություն, որը բաժնետիրոջը կամ բաժնետերերի փոխկապակցված խմբին այս բաժնետոմսերի տաս (10%) կամ ավել տոկոսի	The Insured shall immediately advise the Insurers of any consolidation or merger with another business entity or any purchase, assignment, transfer, pledge or sale of assets or shares occasioning any change in ownership or control. As used in this General Condition, control means the power to determine the management or policy of a controlling holding company of the Insured by virtue of voting share ownership. A change in ownership of voting shares which results in direct or indirect ownership by a shareholder or an affiliated group of shareholders of ten percent (10%) or more of such shares shall be presumed to result in a change of control for the purposes of the required notice.

ուղղակի կամ անուղղակի սեփականատեր է դարձնում, կարելի է պահանջված ծանուցման իմաստով վերահսկման փոփոխություն համարել:	
Որպես սույն Պայմանագրի շարունակության պայման, Ապահովագրվողը պետք է	As a condition to continuation of this Policy, the Insured shall:
(i) տվյալ օրվանից հաշված երեսուն օրերի ընթացքում Ապահովագրողին ներկայացնի գրավոր ծանուցագիր, և	(i) give written notice to the Insurers within thirty (30) days of the event, and
(ii) ապահովի Ապահովագրողին անհրաժեշտ լիարժեք ինֆորմացիայով, և	(ii) promptly provide the Insurers with all such further information as the Insurers may require, and
(iii) ձեռք բերի Ապահովագրողի գրավոր համաձայնությունը այս Պայմանագրով ապահովված որոշ կամ բոլոր ծածկույթները շարունակելու համար, և	(iii) obtain the written consent of the Insurers to continue some or all of the coverage provided by this policy, and
(iv) 10 (տաս) օրերի ընթացքում Ապահովագրողին ներկայացնի գրավոր ծանուցագիր Ապահովագրողի կողմից ներկայացվող նման փոփոխության համար պահանջների պայմաններին համաձայն լինելու վերաբերյալ, և	(iv) give written notice within ten (10) days to the Insurers of its agreement to the terms and conditions which are required by the Insurers consequent upon such change, and
(v) վճարի Ապահովագրողին որևէ հավելավճար: Եթե Ապահովագրողին ծանուցագիր չի ներկայացվում համաձայն վերոհիշյալ պարբերություն (b) (i) –ի, կամ Ապահովագրվողը չի հայտնում իր համաձայնությունը Ապահովագրողին համաձայն վերոհիշյալ պարբերություն (b) (iv)–ի, ապա դա կարող է Ապահովագրվողի ծածկույթը չշարունակելու հիմք հանդիսանալ:	(v) pay to the Insurers any additional premium. Failure to give notice to the Insurers in accordance with paragraph (b)(i) above or failure of the Insured to notify the Insurers of its agreement in accordance with paragraph (b)(iv) above shall be an election by the Insured not to continue coverage.
Սույնով պահանջվող ծանուցագրի ներկայացումը Անդերրայթերներին չէր լինի լիարժեք, եթե չգրվեր Ապահովագրյալի կողմից և չճանաչվեր Ապահովագրողի կողմից:	Notification to the Insurers, as herein required, shall not have been accomplished unless provided by the Insured in writing and acknowledged in writing by the Insurers.
3. ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ, ՀԱՄԱԽՄՐՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԲԻՋՆԵՍԻ ԳՆՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼ ԲԻՋՆԵՍԻՆ ՄԻԱՁՈՒԼՈՒՄԸ	3. ADDITIONAL OFFICES, CONSOLIDATION, MERGER OR PURCHASE BY THE INSURED OF ANOTHER BUSINESS
Ապահովագրվողը Պայմանագրի գործողության ժամկետում ստեղծի նոր մասնաճյուղային գրասենյակներ, բայց ոչ համախմբմամբ, գնի կամ	If the Insured shall, during the Policy Period, establish any new branch offices, other than by merger or consolidation with, or purchase or other

այլ կերպ ձեռք բերի այլ բիզնեսին պատկանող ակտիվներ, ապա նման մասնաճյուղային գրասենյակները ավտոմատ կերպով անմիջապես կապահովագրվի դրանց հաստատման օրվանից առանց Ապահովագրողին ներկայացվելիք ծանուցման կամ Պայմանագրի գործողության ժամկետի մնացորդի համար հավելյալ վճարի:	acquisition of the assets of another business, such branch offices shall be automatically covered hereunder from the dates of their establishment, without the requirement of notice to the Insurers or the payment of additional premium for the remainder of the Policy Period.
Այն դեպքում, երբ Ապահովագրվողը Պայմանագրի գործողության ժամկետում միանա կամ համախմբվի, գնի կամ այլ կերպ ձեռք բերի այլ բիզնեսին պատկանող ակտիվներ, ապա սույն Պայմանագրով կորուստը չի ապահովագրվի հետևյալ դեպքերում՝	In the event that the Insured shall during the Policy Period merge or consolidate with, or purchase, or otherwise acquire, the assets of another business, this Policy shall not afford any coverage of any kind for loss which either:
(a) եթե, դա պատահել է, կամ կարող է հետագայում պատահել ցանկացած գրասենյակում կամ շենքում, կամ	(a) has occurred or may subsequently occur in any offices or premises; or
(b) եթե դա պատահել կամ կարող է պատահել նման բիզնեսի տնօրենի կամ աշխատակցի պատճառով, կամ	(b) has been caused or may be caused by a director or employee of such business; or
(c) եթե ծագել է կամ կարող է ծագել Ապահովագրվողի կողմից միաձուլման, համախմբման կամ գնման արդյունքում ձեռք բերված ակտիվներից, պարտավորություններից կամ նման այլ երևույթներից, եթե միայն Ապահովագրվողը	(c) has arisen or may arise out of the assets or liabilities or other exposures acquired by the Insured, as the result of such merger, consolidation, purchase or acquisition, unless the Insured shall:
(i) նախքան ուժի մեջ մտնելը Ապահովագրողին չներկայացնի նման միաձուլման, համախմբման, գնման կամ ձեռք բերման վերաբերյալ գրավոր ծանուցագիր, և	(i) give written notice to the Insurers, prior to the effective date, of such merger, consolidation, purchase or acquisition, and
(ii) չապահովի Ապահովագրողին անհրաժեշտ լիարժեք ինֆորմացիայով, և	(ii) promptly provide the Insurers with all such further information as the Insurers may require, and
(iii) ձեռք չբերի Ապահովագրողի գրավոր համաձայնությունը այս Պայմանագրով ապահովված նման միաձուլման, համախմբման, գնման կամ ձեռք բերման ծածկույթը երկարաձգելու համար, և	(iii) obtain the written consent of the Insurers to extend the coverage provided by this Policy in respect of such merger, consolidation, purchase or acquisition, and
(iv) Ապահովագրողին չներկայացնի գրավոր ծանուցում ծածկույթի պայմաններին համաձայն լինելու վերաբերյալ, որը միանգամայն տրամաբանական է նման միաձուլման,	(iv) give written notice to the Insurers of its agreement to the terms and conditions of coverage which are required by the Insurers consequent upon such merger, consolidation,

համախմբման, գնման կամ ձեռք բերման համար, և	purchase or acquisition, and
(v) չվճարի Ապահովագրողին որևէ հավելավճար:	(v) pay to the Insurers any additional premium.
Եթե Ապահովագրողին ծանուցագիր չի ներկայացվում համաձայն վերոհիշյալ պարբերություն (i) –ի կամ Ապահովագրվողը չի հայտնում իր համաձայնությունը Ապահովագրողին համաձայն վերոհիշյալ պարբերություն (iv) –ի, ապա դա կարող է Ապահովագրվողի ծածկույթը չշարունակելու հիմք հանդիսանալ:	Failure to give notice to the Insurers in accordance with paragraph (i) above or failure of the Insured to notify the Insurers of its agreement in accordance with paragraph (iv) above shall be an election by the Insured not to continue coverage.
Սույնով պահանջվող ծանուցագրի ներկայացումը Ապահովագրողին չի լինի լիարժեք, եթե չգրվի Ապահովագրվողի կողմից և չճանաչվի Ապահովագրողի կողմից:	Notification to the Insurers, as herein required, shall not have been accomplished unless provided by the Insured in writing and acknowledged in writing by the Insurers.
4. ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	4. TERMINATION PROVISIONS
Պայմանագրի գործողությունը կդադարի անկախ չվաստակած պարգևի վճարվելուց կամ չվճարվելուց,	This Policy shall terminate with or without the tender of unearned premium
(a) հենց որ՝	(a) immediately upon
(i) կատարվի Ապահովագրվողի ունեցած վերահսկողության մեջ փոփոխություն հարուցող դեպք՝ ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 2(a)-ում,	(i) the happening of any of the events relating to a change in control of the Insured as set forth in General Condition No. 2(a),
(ii) Ապահովագրվողը չտեղեկացնի ակտիվների կամ բաժնետիրական սեփականության փոփոխության մասին, կամ որևէ այլ կերպ խախտի Ընդհանուր Պայման No. 2(b)-ում նշված պայմանները,	(ii) the failure by the Insured to notify a change of assets or share ownership or otherwise comply with the terms as set forth in General Condition No. 2(b),
(iii) Ապահովագրողը հրաժարվի ապահովագրությունը շարունակելուց՝ սեփականատերերին կամ վերահսկողության փոփոխությունից հետո, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 2(b)-ում,	(iii) refusal by the Insurers to continue coverage following a change in ownership or control as set forth in General Condition No. 2(b).
(b) անմիջապես՝ Ապահովագրվողի ցանկացած դուստր-ձեռնարկության նկատմամբ, եթե վերջինիս հետ կատարվի նրա վերահսկողության կամ սեփականատերերի	(b) immediately as to any subsidiary of the Insured upon the happening of any event with regard to such subsidiary relating to a change in control or ownership of such subsidiary as set forth in

փոփոխություն, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 2-ում:	General Condition No. 2.
(c) Ապահովադրի Տնօրենին կամ Աշխատակցին անմիջապես առնչվող, Ապահովադրի՝ վերը նշված անձանց հետ գաղտնի պայմանավորվածություն չունեցող Տնօրենի կամ ղեկավարի կողմից նշված անձանց կողմից երբևէ կատարած որևէ անազնիվ կամ խարդախ գործողության մասին առաջին անգամ տեղեկանալուն պես՝ անկախ այն բանից այդ գործողության տեսակը փոխհատուցվում է սույն պայմանագրի 1-ին հոդվածով թե ոչ, սակայն ամեն դեպքում չնվազեցնելով Ապահովադրի Տնօրենի կամ ղեկավարի կողմից նման անազնիվ կամ խարդախ արարքի մասին տեղեկանալու պահին տվյալ անձի վերահսկողության տակ տեղափոխվող Գույքի կորստի նշանակությունը:	(c) immediately as to any Director or Employee of the Insured, as soon as any Director or officer of the Insured not in collusion with said person shall first learn of any dishonest or fraudulent act on the part of the Director or Employee whenever committed, whether or not such act is of a type covered by Insuring Clause No. 1 of this Policy, but in any event without prejudice to the loss of Property in Transit in the custody of such person at the time the Director or officer of the Insured shall so learn of such dishonesty or fraud.
(d) Սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին Ապահովագրողի ծանուցումը Ապահովագրվողի կողմից ստացվելուց երեսուն (30) օր հետո: Եթե ուղարկված է նախաձեռնված, պատվիրված փոստով և հասցեագրված Ապահովագրվողի Գլխամասի Հասցեին՝ համաձայն Ծրագրում նշվածի, ապա նման ծանուցումը կհամարվի ստացված՝ ուղարկվելուն պես:	(d) thirty (30) days after receipt by the Insured of written notice from the Insurers of their decision to terminate this Policy. If sent by prepaid registered post and addressed to the Principal Address of the Insured, as stated in the Proposal Form, such notice shall be deemed to have been received when sent.
(e) անմիջապես՝ սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին իր որոշման մասին Ապահովագրվողի ծանուցումը Ապահովագրողի կողմից ստացվելուն պես:	(e) immediately upon receipt by the Insurers of a written notice from the Insured of its decision to terminate this Policy.
(f) անմիջապես՝ Ծրագրի Կետ 4-ում նշված ժամկետի լրացման ամսաթվին:	(f) immediately upon expiration date stated in Item 4 of the Schedule.
Ապահովագրողը կփոխհատուցի որևէ չվաստակված պարգև, որը կհաշվարկվի Տարեկան Պարգևի կարճաժամկետ տոկոսադրույքով, եթե գործողության դադարեցումը տեղի ունենա ըստ սույն Ընդհանուր Պայմանի (a) կամ (d) պարբերության, սակայն համամասն Տարեկան Պարգևին, եթե դադարեցվի Ապահովագրողի կողմից՝ ըստ սույն Ընդհանուր Պայմանի (c) պարբերության:	The Insurers shall refund any unearned premium computed at short-rate of the Annual Premium if terminated pursuant to paragraph (a) or (e) of this General Condition but pro-rata of the Annual Premium if terminated by the Insurers as provided in paragraph (d) of this General Condition.
Ապահովագրողը կփոխհատուցի որևէ չվաստակված պարգև, որը կհաշվարկվի Տարեկան Պարգևի կարճաժամկետ տոկոսադրույքով, եթե գործողության դադարեցումը տեղի ունենա ըստ սույն Ընդհանուր	This Policy shall also terminate immediately upon exhaustion of the Aggregate Limit of Indemnity by one or more payments of loss hereunder, in which event the premium is fully earned.

Պայմանի (a) կամ (d) պարբերության, սակայն համամասն Տարեկան Պարգևին, եթե դադարեցվի Ապահովագրողի կողմից՝ ըստ սույն Ընդհանուր Պայմանի (c) պարբերության:	
5. ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀԱՏՈՒՑՈՒՄ Ընդունված է, որ այն կորուստի դեպքում, որը ծածկվում է նաև այլ ապահովագրությամբ կամ փոխհատուցվում է, սույն Պայմանագիրը, վճարում է միայն այլ ապահովագրության կամ փոխհատուցման կողմից ծածկված գումարները գերազանցող հայցերը (չգերազանցելով Համընդհանուր Սահմանաչափը կամ այլ կիրառվող Ենթա-Սահմանները): Որպես հավելյալ ապահովագրում սույն Պայմանագիրը չի կատարում որևէ կորուստի վճարում, միջև որ այլ ապահովագրման գումարը չսպառվի:	5. OTHER INSURANCE OR INDEMNITY It is agreed that in the event of loss, this Policy, insofar as it covers loss also covered by other insurance or indemnity, shall only pay claims (not exceeding the Aggregate Limit of Indemnity or any applicable Sub-Limit) for the excess of the amount of such other insurance or indemnity. As excess insurance this Policy shall not apply or contribute to the payment of any loss until the amount of such other insurance or indemnity shall have been exhausted.
6. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԶՈՓԸ (a) Ապահովագրողի ամբողջական պարտավորությունը սույն Պայմանագրի Ծրագրի 4 կետում նշված Պայմանագրի գործողության Ժամկետում հայտնաբերված կորուստի կամ կորուստների համար, իրավաբանական վճարները և իրավաբանական ծախսերը ներառյալ, սահմանափակվում է սույն Պայմանագրի Ծրագրի 6 կետում նշված Համընդհանուր Սահմանաչափով՝ անկախ նման կորուստի կամ կորուստների գումարի չափից: Ցանկացած գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա-Սահման համարվում է Համընդհանուր Սահմանաչափի մաս, այլ ոչ թե լրացում, իսկ բոլոր տեսակի կորուստների, ինչպես նաև իրավական վճարների կամ իրավական ծախսերի հանդեպ ունեցած Ապահովագրողի ընդհանուր պարտավորությունները, որոնք վերաբերվում են ցանկացած նմանատիպ Ենթա-Սահման ունեցող Ապահովագրական Հոդվածին, սահմանափակվում են Ենթա-Սահմանի գումարով՝ անկախ նման կորուստի կամ կորուստների գումարի չափից:	6. LIMIT OF INDEMNITY (a) The total liability of the Insurers for all loss or losses discovered during the Policy Period set forth in Item 4 of the Schedule of this Policy and including legal fees and legal expenses is limited to the Aggregate Limit of Indemnity stated in Item 6 of the Schedule of this Policy irrespective of the total amount of such loss or losses. The Sub-Limit of any applicable Insuring Clause is part of and not in addition to the Aggregate Limit of Indemnity and the total liability of the Insurers for all losses, including legal fees and legal expenses, concerning any such Insuring Clause with a Sub-Limit is limited to the amount of the Sub-Limit, irrespective of the total amount of such loss or losses.
Համընդհանուր Սահմանաչափը նվազում է սույն Պայմանագրի համաձայն վճարված գումարները չափով: Նման վճարումների արդյունքում սպառված Համընդհանուր Սահմանաչափի հետևանքով Ապահովագրողը այլևս պատասխանատու չի	The Aggregate Limit of Indemnity shall be reduced by the amount of any payment made under this Policy. Upon exhaustion of the Aggregate Limit of Indemnity by such payments the Insurers shall have no further liability:

Լինի	
(i) սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների համաձայն հատուցել Ապահովագրվողին կորուստի կամ կորուստների դիմաց, և	(i) to indemnify the Insured under any Insuring Clause(s) of this Policy for any loss or losses, and
(ii) հատուցել Ապահովագրվողին իրավաբանական վճարների և իրավաբանական ծախսերի դիմաց, և	(ii) to indemnify the Insured for any legal fees and legal expenses, and
(iii) շարունակել Ապահովագրվողի պաշտպանությունը այն դեպքում, երբ Ապահովագրողը դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը իրականացնելու ցանկություն հայտնի: Ապահովագրողի կողմից ներկայացված Համընդհանուր Սահմանաչափի սպառման վերաբերյալ ծանուցագրի համաձայն, Ապահովագրվողը պետք է իր վրա վերցնի դրա պաշտպանության պատասխանատվությունը:	(iii) to continue the defense of the Insured in the event that the Insurers elected to conduct the defense of any suit or legal proceedings. Upon notice by the Insurers to the Insured that the Aggregate Limit of Indemnity has been exhausted, the Insured shall assume all responsibility for its defense at its own cost
(b) Ի լրումն նվազեցված Համընդհանուր Սահմանաչափին, Ծրագրի 6 կետում նշված գործող Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների Ենթա-Սահմանը կնվազի վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի հետ առնչվող վճարման գումարի չափով: Նման վճարումների արդյունքում վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի Ենթա-Սահմանի սպառման պատճառով Ապահովագրողը այլևս պատասխանատվություն չի ունենա:	(b) In addition to the Aggregate Limit of Indemnity being reduced, the Sub-Limit of any applicable Insuring Clause(s) stated in Item 6 of the Schedule shall be reduced by the amount of any payment made in connection with said Insuring Clause(s). Upon exhaustion of the Sub-Limit applicable to said Insuring Clause(s) by such payments the Insurers shall have no further liability:
(i) սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների համաձայն Ապահովագրողին հատուցել կորուստը կամ կորուստները, և	(i) to indemnify the Insured under said Insuring Clause(s) of this Policy for any loss or losses, and
(ii) հատուցել Ապահովագրողին իրավաբանական վճարները կամ իրավաբանական ծախսերը, որ կատարվել են կապված վերոհիշյալ կորուստի (կորուստների), կամ վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի (Հոդվածների) հետ:	(ii) to indemnify the Insured for any legal fees and legal expenses incurred in connection with said loss or losses or in connection with said Insuring Clause(s), and
(iii) շարունակել Ապահովագրվողի	(iii) to continue the defense of the Insured in

պաշտպանությունը այն դեպքում, երբ Ապահովագրող դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը իրականացնելու ցանկություն հայտնի: Ապահովագրողի կողմից ներկայացված Համընդհանուր Սահմանաչափի սպառման վերաբերյալ ծանուցագրի համաձայն, Ապահովագրվողը պետք է իր վրա վերցնի դրա պաշտպանության պատասխանատվությունը:	the event of the Insurers' election to conduct the defense of any suit or legal proceeding in connection with said loss or losses. Upon notice by the Insurers to the Insured that the Sub-Limit has been exhausted, the Insured shall assume all responsibility for its defense at its own cost.
Եթե սույն Պայմանագրին համաձայն կատարված վճարումների պատճառով Համընդհանուր Սահմանաչափը սույն Պայմանագրի Ծրագրի 6 կետում ցանկացած Ենթա-Սահմանի համար նշված գումարի չափից էլ է պակասում, ապա ցանկացած Ենթա-Սահմանի գումարը համապատասխանաբար կնվազի, այնպես, որ կորուստի /կորուստների/, ինչպես նաև իրավաբանական վճարների և իրավաբանական ծախսերի համար անհրաժեշտ ցանկացած Ենթա-Սահմանի գումարը չի գերազանցի Համընդհանուր Սահմանաչափի պակասեցված գումարի չափը:	If by reason of payments made under this Policy the Aggregate Limit of Indemnity is reduced to an amount less than the amount stated for any Sub-Limit in Item 6 of the Schedule of this Policy, then the amount of any such Sub-Limit shall be reduced accordingly so that the total amount available under any Sub-Limit for any loss or losses, including legal fees and legal expenses, does not exceed the reduced amount remaining available under the Aggregate Limit of Indemnity.
Համընդհանուր Սահմանաչափը և որևէ Ենթա-Սահման լիովին կամ մասնակի չեն վերականգնվի սույն Պայմանագրի համաձայն կատարված վճարմանը հաջորդող փոխհատուցմամբ, եթե միայն նման փոխհատուցումը փաստացիորեն չստացվի Ապահովագրողի կողմից Ծրագրի 4 կետում նշված ժամանակահատվածում կամ էլ դրան հաջորդող տասներկու /12 / օրացուցային ամիսների ընթացքում:	The Aggregate Limit of Indemnity and any Sub-Limit shall not be reinstated in whole or in part by any recovery effected subsequent to any payment made under this Policy, unless such recovery is actually received by Insurers during the period stated in Item 4 of the Schedule or within twelve (12) calendar months thereafter.
Եթե կորուստը ենթակա է հատուցման մեկից ավելի Ապահովագրական Հոդվածներով, ապա կորստին համապատասխան վճարվելիք առավելագույն գումարը չի գերազանցի ամենամեծ գումար ունեցող Ապահովագրական Հոդվածի չափին:	If a loss is covered under more than one Insuring Clause the maximum amount payable with respect to such loss shall not exceed the largest amount remaining available under any one applicable Insuring Clause.
(c) Կորած Արժեթղթեր: Այն դեպքում, երբ արժեթղթի կորուստը փոխարինվում է կորած արժեթղթերի մուրհակի գործածմամբ կամ Ընդհանուր Պայման 14 կետի հատուցման	(c) Lost Securities: In the event that a loss of a security is settled through the use of a lost securities bond or indemnity agreement pursuant to General Condition 14, such loss, to

համաձայնագրով, նման կորուստը չի նվազեցնի Համընդհանուր Սահմանաչափը կամ որևէ Ենթա-սահման, որոնք պահպանվում են կորուստի կամ կորուստների վճարման համար, եթե Պայմանագրի գործողության ժամկետում Ապահովագրողին չեն դիմում վճարում կատարել համաձայն կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման պայմանագրի: Այնուամենայնիվ, նման կորուստի համար կամ կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման համաձայնագրի համաձայն Ապահովագրողի կատարած վճարումը կդիտվի որպես սույն Պայմանագրով կատարված վճարում:	the extent that during the Policy Period the Insurers are not called upon to pay under said lost securities bond or indemnity agreement, shall not reduce the Aggregate Limit of Indemnity or any Sub-Limit remaining for the payment of any loss or losses. However, any payment by the Insurers of such loss or under such lost securities bond or indemnity agreement shall be deemed to be a payment under this Policy.
Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթա-Սահմանի սպառումը կամ նվազումը չի ազդի Ապահովագրողի պարտավորությունների վրա՝ կապված կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման համաձայնագրի հետ, որոնք թողարկվել են նախքան Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթա-Սահմանի սպառումը կամ նվազումը:	The exhaustion or reduction of the Aggregate Limit of Indemnity or any Sub-Limit shall not affect the Insurers' obligations in connection with any lost securities bond or indemnity agreement issued prior to the exhaustion or reduction of the Aggregate Limit of Indemnity or any applicable Sub-Limit.
7. ԿՈՐՈՒՄՏԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	7. NOTIFICATION AND DISCOVERY OF LOSS
Որպես սույն Պայմանագրով հատուցելու պայման, Ապահովագրվողը պետք է կորուստի հայտնաբերումից հետո, 30 օրերի ընթացքում, դրա մասին տեղյակ պահի Ապահովագրողին: Համաձայն սույն Պայմանագրի, կորուստը համարվում է հայտնաբերված այն ժամանակ, երբ Ապահովագրվողը առաջին անգամ տեղեկացվում է այն փաստերի մասին, որոնք կարող են խելամիտ անձին ստիպել մտածելու, որ այս Պայմանագրով ապահովագրված այս կամ այն տեսակի կորուստը արդեն պատահել կամ դեռ պատահելու է՝ հաշվի չառնելով, թե դրան հանգեցնող գործողությունները, գործարքները կամ իրադարձությունները երբ են տեղի ունեցել, ինչպես նաև հաշվի չառնելով այն, թե արդյոք Ապահովագրվողի այդ պահի տեղեկացվածությունը բավարար է ապացուցելու համար, որ նման տեսակի կորուստը համապատասխանում է սույն Պայմանագրի պայմաններին, եթե նույնիսկ կորուստի գումարի չափը կամ այլ մանրամասներ այդ պահին առկա չլինեն:	As a condition precedent to its right to be indemnified under this Policy, the Insured shall, as soon as possible and in any event within thirty (30) days after discovery by the Insured of any loss hereunder, give written notice thereof to the Insurers. For the purposes of this Policy, discovery is deemed to occur at the time when the Insured first becomes aware of facts which would cause a reasonable person to believe that a loss of the kind covered by this Policy has been or will be incurred, regardless of when the acts, transactions or events causing or contributing to such loss occurred, and regardless of whether the Insured's knowledge is sufficient at such time to prove that such loss meets the terms and conditions of this Policy, and even though the amount or details of loss may not then be known

Կորուստը նաև համարվում է հայտնաբերված, երբ Ապահովագրվողը ստանում է փաստացի կամ պոտենցիալ հայցի ծանուցագիր, որում ենթադրվում է, որ նա պատասխանատվություն է կրում ինչ-որ երրորդ կողմի հանդեպ, որը, ճշմարտացի լինելու դեպքում, կարող է սույն Պայմանագրով ապահովագրված կորուստ համարվել, եթե նույնիսկ կորուստի գումարի չափը կամ այլ մանրամասներ այդ պահին առկա չլինեն:	Discovery is also deemed to occur when the Insured receives notice of an actual or potential claim in which it is alleged that the Insured is liable to a third party under circumstances which, if true, might constitute a loss of a type covered by this Policy, even though the amount or details of loss may not then be known.
Ապահովագրվողի կողմից հայտնաբերված բոլոր տեսակի կորուստները, որոնք հանդիսանում են մեկ անձի անուշադրության արդյունք կամ, եթե տվյալ անձը ներգրավված է այդ կորուստի մեջ անկախ նրա Աշխատակից լինել կամ չլինելուց, կհամարվեն որպես մեկ կորուստ:	All loss or losses discovered by the Insured which are attributable to the acts or omissions of one person, whether or not an Employee, or in which such person is concerned or implicated, shall be deemed to be one loss.
8. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ Որպես սույն Պայմանագրով ապահովագրվելու նախապայման, Ապահովագրվողը պետք է Պայմանագրում նշված կորուստներին վերաբերող բոլոր հարցերով համագործակցի Ապահովագրողի և նրանց կողմից նշանակված ներկայացուցիչների հետ: Ապահովագրվողը Ապահովագրողի պահանջով, նշված ժամին ու վայրում պետք է ապահովի գործի հետ առնչվող բոլոր հաշվետվությունները (իր հաշիվների աուդիտորական հաշվետվությունները ներառյալ) , իր Աշխատակիցներից մեկին կամ այլ անձանց պատրաստի հարցազրույցի: Ապահովագրվողը համաձայն է կազմել բոլոր փաստաթղթերը, աջակցել բոլոր իրավունքների, շահերի և հիմքերի պաշտպանությանը, որպիսիք նա կարող է ունենալ անձի կամ կազմակերպության հանդեպ՝ կապված նշված կորուստների հետ, և չիրականացնել ոչինչ, որը կվնասի տվյալ իրավունքներին և հիմքերին:	8. CO-OPERATION As a condition precedent to its right to be indemnified under this Policy, the Insured shall co-operate fully with the Insurers and their appointed representatives in all matters pertaining to any loss notified hereunder. The Insured shall, upon request and at times and places designated by the Insurers, provide for examination all pertinent records including audit records of its accountants and provide for interview any of its Employees or other persons, to the best of its ability and power. The Insured agrees to execute all papers and render all assistance to secure all rights, title, interest and causes of action as it may have against any person or entity in connection with any loss notified hereunder, and to do nothing to prejudice such rights or causes of action.
9. ԿՈՐՈՒՍՏԻ ԱՊԱՑՈՒՅՑ Կորուստի հայտնաբերումից հետո վեց ամիսների ընթացքում, Ապահովագրվողը պետք է Ապահովագրողին գրավոր ներկայացնի կորուստի ապացույց, որը պատշաճ կերպով կազմում է Ապահովագրվողի գլխավոր ֆինանսական պաշտոնյան՝ բոլոր տվյալների հետ մեկտեղ: Ապացույցի որոնման պատասխանատվությունը ընկնում է Ապահովագրվողի վրա՝ հետևյալ կորուստների համար (a) կորուստ, որի համար հայց է ներկայացվել	9. PROOF OF LOSS Within six months of discovery of loss, the Insured shall furnish affirmative proof of loss to the Insurers, in writing, duly sworn to by the chief financial officer of the Insured together with full particulars. The onus of proof is upon the Insured in preparing its proof of loss with respect to: (a) a loss for which claim is made under Insuring

համաձայն Ապահովագրական Հոդված 1-ի, նման կորուստի համար պատասխանատու անձին հայտնաբերելու, պարզելու համար այն անազնիվ և հանցավոր գործողությունները, որոնք նմանատիպ կորուստի պատճառ են հանդիսացել, հայտնաբերելու համար վարկային կամ առևտրային գործարքների արդյունքում ձեռք բերած չվաստակած անձնական ֆինանսական շահը, ինչպես նաև ապացուցելու համար, որ նման կորուստի պատճառ են հանդիսացել այդ անազնիվ և հանցավոր գործողությունները, կամ	Clause No. 1, to identify the person responsible for the loss; to identify the specific dishonest or fraudulent acts involved in each transaction or item constituting such loss; to identify the improper personal financial gain obtained for each loan or trading transaction; and to establish that the resultant loss was directly caused by such dishonest or fraudulent acts, or
(b) կորուստ, որի համար հայց է ներկայացվել համաձայն Ապահովագրական Հոդված 4 և 5-ի, որն իր մեջ ներառում է որևէ իր, որն ունի Կեղծ Ստորագրություն, Կեղծ Փոփոխում կամ պարզապես Կեղծված է, ապացուցելու համար, որ եթե դրանք լինեին իսկական, չունենային Կեղծ Ստորագրություն, Կեղծ Փոփոխում կամ պարզապես Կեղծված չլինեին, ապա Ապահովագրվողը կրած չէր լինի այն կորուստը, որի համար հայց էր ներկայացված, կամ	(b) a loss for which claim is made under Insuring Clause Nos. 4 or 5, involving an item which bears a Forged Signature, is Counterfeit or bears a Fraudulent Alteration, to establish that if such item were genuine and did not bear a Forged Signature, or were not Counterfeit or did not bear a Fraudulent Alteration, the Insured would not have sustained the loss claimed, or
(c) որևէ Ապահովագրական Հոդվածի համաձայն ներկայացված կորուստի հայց ապացուցելու համար, որ նման կորուստի ուղղակի պատճառ է հանդիսացել ապահովագրված ռիսկը, այլ ոչ թե տնտեսական պայմանները կամ այլ պատճառներ:	(c) a loss for which claim is made under any Insuring Clause, to establish that such loss directly resulted from the insured peril and not from economic conditions or other contributing causes.
10. ԿՈՐՈՒՍՏԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ	10. LEGAL PROCEEDINGS FOR RECOVERY OF LOSS
Եթե Ապահովագրողը ստուգումն ավարտելուց հետո Ապահովագրվողին չի վճարում այն կորուստի դիմաց, որը վերջինիս կարծիքով պետք է հատուցվեր սույն Պայմանագրի պայմանների և այլ դրույթների համաձայն, ապա Ապահովագրվողի պահանջով Ապահովագրողը կարող է ենթարկվել ցանկացած իրավասու հայկական դատարանի որոշմանը:	If the Insurers, after completing their investigation, do not pay a loss for which the Insured believes the terms, conditions and other provisions of this Policy entitle it to recovery hereunder, the Insurers at the request of the Insured, shall submit to the jurisdiction of any court of competent jurisdiction of Armenia.
Ցանկացած նմանատիպ դատական գործընթացների դատական ծանուցում կատարվում է Ծրագրում նշված անձանց միջոցով, ովքեր օրենքով սահմանված կարգով իրավասու են Ապահովագրողի անունից ընդունելու դատական ծանուցումը: Ապահովագրողներ դեմ սկսված նմանատիպ դատական գործընթացների	Service of process in any such legal proceedings shall be made upon the person(s) named in the Schedule who are duly authorized to accept Service of Process on behalf of the Insurers. In such legal proceedings instituted against any one of the Insurers, the other Insurers hereon shall abide by the final judgment of such Court or of any Appellate Court in the event of

Ժամանակ, մյուս Ապահովագրողները ստիպված կլինեն հաշտվել Դատարանի վերջնական որոշման, իսկ բողոքարկման դեպքում՝ Վճռաբեկ Դատարանի վերջնական որոշման հետ:	appeal.
Եթե Ապահովագրվողը երեք ամիսների ընթացքում չներկայացնի կորուստի ապացույցը, ինչպես նշված է Ընդհանուր Պայման 9-ում, ապա կորուստի հատուցման դատական գործընթացները համաձայն սույնի չեն սկսվի: Դատական գործընթացը չի սկսվի նաև նման կորուստի հայտնաբերումից հետո երկու տարին լրանալու դեպքում:	Legal proceedings for recovery of loss hereunder shall not be brought until after three months from the Insured furnishing proof of loss, as stated in General Condition No. 9, nor after the expiration of two years from the discovery of such loss.
Եթե վերոհիշյալ երկու տարիների սահմանափակման ժամանակահատվածը արգելված է սույն Պայմանագրի կազմումը ղեկավարող օրենքով, ապա նման սահմանափակումը ենթարկվում է փոփոխման, այնպես որ համապատասխանի տվյալ օրենքով թույլատրվող նվազագույն ժամանակահատվածին:	If the said two year limitation is prohibited by any law controlling the construction of this Policy, such limitation shall be deemed to be amended so as to equal the minimum period of limitation permitted by such law.
11. ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ	11. INTERPRETATION
Սույն Պայմանագրի դրույթների, բացառությունների, սահմանափակումների և պայմանների ձևակերպումն ու մեկնաբանությունը որոշվում է ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համաձայն սույն Պայմանագրում առկա անգլերեն և հայերեն տեքստի:	The construction, interpretation and meaning of the terms, exclusions, limitations and conditions of this Policy shall be determined in accordance with the common law of the Republic of Armenia and in accordance with the English and Armenian text as it appears in this Policy.
12. ԲԱՑԱՌԻԿ ԴՈՒԽՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ	12. EXCLUSIVE POLICY BENEFIT
Համաձայնեցվում է, որ սույնով տրամադրվող Ապահովագրությունը կլինի բացառապես սույնում առաջինը նշված Ապահովագրվողի օգտին, և որևէ դեպքում որևէ մեկը, բացի հիշյալ Ապահովագրվողից, չի ունենա սույն Պայմանագրի շրջանակներում գործելու որևէ իրավունք:	It is agreed that the Insurance granted herein shall be for the exclusive benefit only of the first named Insured herein, and that in no event shall anyone other than said Insured have any right of action under this Policy.
13. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	13. BASIS OF VALUATION
(a) Որևէ կորստի դիմաց սույն Պայմանագրի համաձայն վճարվելիք գումարը որոշելիս, ցանկացած տվյալ կորստի պատճառը հանդիսացած աղբյուրին առնչվողից ստացված ամբողջ գումարը, ներառյալ մայր գումարի, տոկոսների, շահաբաժինների, կոմիսիոն վճարների, և այլնի վճարումը կամ ստացումը, երբ էլ ստացված լինի, պետք է նվազեցվի փաստացի վճարված, կանխավճարված, վերցված կամ այլ կերպ կորսված գումարից: Ցանկացած աղբյուրից ստացված այն գույքի	(a) In determining the amount collectible under this Policy for any loss, all money received from any source whatsoever in connection with any matter from which a claimed loss has arisen, including payments and receipts of principal, interest, dividends, commissions and the like, whenever received, shall be deducted from the amount actually paid out, advanced, taken or otherwise lost. The value of all property received from any source whatsoever in connection with any matter from which a claimed loss has arisen, whenever

արժեքը, որը ստացվել է տվյալ կորստի պատճառը հանդիսացած որևէ խնդրի առնչությամբ, երբ էլ ստացված լինի, պետք է նմանապես նվազեցվի Ապահովագրվողի կողմից հայցվող կորստից:	received, shall likewise be deducted from the Insured's claimed loss.
(b) Այն կորստի համար, որի վերաբերյալ հայց է ներկայացվելու, որևէ արժեթղթերի, օտարերկրյա դրամական միջոցների, արժույթների կամ թանկարժեք մետաղների արժեքը կորոշվի կորստի հայտնաբերմանը նախորդող օրվա փակման շուկայական արժեքով:	(b) The value of any securities, foreign funds, currencies or precious metals for the loss of which a claim shall be made, shall be determined by their closing market value on the last business day prior to the date of discovery of the loss.
Եթե նման օրը շուկայական գին կամ արժեք առկա չէ, ապա արժեքը պետք է փոխհամաձայնեցվի Ապահովագրվողի ու Ապահովագրողի միջև, իսկ դրա անհնարության դեպքում՝ արբիտրաժով: Ինչևէ, եթե նման արժեթղթերը, օտարերկրյա դրամական միջոցները, արժույթները կամ թանկարժեք մետաղները փոխարինելի են, ապա Ապահովագրվողը, համաձայն Ընդհանուր Պայման 14-ի, կարող է փոխարինել նշված գործիքները Ապահովագրողի համաձայնությամբ, և արժեք կհանդիսանա փոխարինող գործիքների փաստացի գինը:	If there is no market price or value for the same on such day, then the value shall be as agreed between the Insured and the Insurers or in default thereof by arbitration. If, however, such securities, foreign funds, currencies or precious metals are replaceable, then the Insured, subject to General Condition 14, may replace said items with the approval of the Insurers and the value shall be the actual cost of replacement.
Եթե սույն Պայմանագիրը ենթակա է Ֆրանշիզայի, կամ եթե Ծրագրի Կետ 6-ի այն Պայմանագրի Սահմանաչափը, որը մնացել է որևէ կորստի կամ կորուստների հատուցման համար, իր գումարով բավարար չէ Ապահովագրվողին լրիվ հատուցելու այն արժեթղթերի կորստի համար, որոնց համար ըստ սույնի հայց է ներկայացվել, ապա սույն Պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվությունը սահմանափակվում է փոխհատուցմամբ կամ կրկնօրինակմամբ՝ նման արժեթղթերի այնքան մասի, որքանը որ ունի սույն Պայմանագրի կիրառելի Ապահովագրական Հոդվածով նախատեսված ստացվելիք գումարին հավասար արժեք:	If this Policy is subject to a Deductible, or the Policy Limit in Item 6 of the Schedule remaining for the payment of any loss or losses is not sufficient in amount to indemnify the Insured in full for the loss of securities for which claim is made hereunder, the liability of the Insurers under this Policy is limited to the payment for, or the duplication of, so much of such securities as has a value equal to the amount collectible under the applicable Insuring Clause of this Policy.
(c) Այն դեպքում, երբ կորչում կամ վնասվում է Ապահովագրողի գործունեության իրականացման ընթացքում օգտագործվող հաշվեմատյանների կամ այլ գրառումների տեսքով սեփականություն, ապա	(c) In the case of loss of or damage to property consisting of books of accounts or other records used by the Insured in the conduct of its business, the Insurers shall be liable under this Policy only if such books or records are actually

Ապահովագրողը պատասխանատու կլինի սույն Պայմանագրով միայն այն դեպքում, երբ նման հաշվեմատյանները կամ գրառումները փաստացի վերարտադրվեն, և ապա՝ ոչ ավելի, քան դատարկ հաշվեմատյանների, դատարկ էջերի, կամ այլ նյութերի արժեքն է, գումարած այն տվյալների գրառման կամ արտագրման համար ծախսված աշխատանքն է, որոնք պետք է տրամադրված լինեն Ապահովագրվողի կողմից, որպեսզի վերարտադրվեն նման հաշվեմատյանները կամ գրառումները:	reproduced and then for not more than the cost of blank books, blank pages, or other materials plus the cost of labour for the actual transcription or copying of data which shall have been furnished by the Insured in order to reproduce such books and other records.
14. ԿՈՐՍՎԱԾ ԱՐԺԵՂՅԵՐ	14. LOST SECURITIES
Արժեթղթերի սույն Պայմանագրով ծածկված կորստին առնչվող հայցի դեպքում, Ապահովագրվողը, համաձայն ստորև նշված պայմանների, պետք է նախ փորձի փոխարինել կորսված արժեթղթերն իր կողմից տրված հատուցման նամակի միջոցով: Եթե նա ի վիճակի չէ այդ անել, ապա, Ապահովագրողի նախօրոք համաձայնությամբ, պետք է ապահովի կորած արժեթղթերի մուրհակ՝ կրկնօրինակ արժեթղթերի թողարկման հնարավորություն ստանալու համար:	In the event of a claim in respect of a loss covered under this Policy of securities, the Insured shall, subject to the conditions stated below, first attempt to replace the lost securities by use of a letter of indemnity issued by it. In the event that it is unable to replace the lost securities by a letter of indemnity, the Insured shall, subject to the Insurers' prior consent, secure a lost securities bond for the purpose of obtaining the issuance of duplicate securities.
Համաձայնեցվում է նաև, որ Ապահովագրողը Ապահովագրվողին կհատուցի այնպիսի գումարի կամ գումարների չափով, որոնք գերազանցում են Ծրագրում նշված կիրառելի Ֆրանշիզան, և չեն գերազանցում Ծրագրում նշված Համընդհանուր Սահմանաչափը, կամ նման կորստի առնչությամբ որևէ կիրառելի Ենթասահմանաչափը, որը կմնա որևէ կորստի հատուցման համար Ապահովագրվողի կողմից հատուցման նամակի ստորագրման կամ կորսված արժեթղթերի մուրհակի թողարկման ժամանակ, և որը Ապահովագրվողից կարող է պահանջվել վճարել Պայմանագրի գործողության ժամկետի կամ դրան հաջորդող ցանկացած ժամանակ՝ ըստ որևէ հատուցման համաձայնագրի, որը Ապահովագրվողի կողմից ստորագրվել կամ տրվել է կորսված բաժնետոմսերի մուրհակ թողարկող Ընկերությանը:	It is further agreed that the Insurers will indemnify the Insured for such sum or sums, in excess of the applicable Deductible as stated in the Schedule, not exceeding the amount of the Aggregate Limit of Indemnity stated in the Schedule, or any applicable Sub-Limit thereof with respect to such loss remaining available for the payment of any loss at the time of the execution by the Insured of a letter of indemnity or the securing of the lost securities bond, which the Insured may be required to pay either during the Policy Period or any time thereafter by reason of any indemnifying agreement executed by the Insured or delivered by the Insured to the Company issuing the lost securities bond.
Համաձայնեցվում է նաև, որ Ապահովագրվողի հաշվին կլինի հատուցման համաձայնագրի կամ կորսված բաժնետոմսերի մուրհակի ձեռքբերման ծախսը՝ կորստի այն չափով, որը Ծրագրում նշված կիրառելի Ֆրանշիզայի սահմաններում է, կամ որը գերազանցում է այն Համընդհանուր Սահմանաչափը, որը մնում է նշված կորստի	It is further agreed that the Insured shall bear for its own account the cost of obtaining such indemnity agreement or lost securities bond for that portion of the loss which falls within the applicable Deductible as stated in the Schedule or which is in excess of the Aggregate Limit of Indemnity remaining available for the payment of said loss or in excess of any applicable

հատուցման համար կամ որը գերազանցում է որևէ կիրառելի Ենթասահմանաչափ, որը մնում է նշված կորստի հատուցման համար:	Sub-Limit remaining available for the payment of said loss.
Ապահովագրողի հաշվին կլինի նման հատուցման համաձայնագրի կամ կորսված բաժնետոմսերի մուրհակի ձեռքբերման ծախսը՝ այն կորստի մասով, որը ծածկված կլինի սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածներով, և որը գերազանցում է Ֆրանշիզան, սակայն գտնվում է այն Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթասահմանաչափի մեջ, որը մնում է որևէ կորստի հատուցման համար:	The Insurers shall bear for their own account the cost of obtaining such indemnity agreement or lost securities bond for that loss which would be covered under the Insuring Clauses of this Policy and which exceeds the Deductible and is within the Aggregate Limit of Indemnity or Sub-Limit remaining available for the payment of any loss.
15. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ, ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՓՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ	15. SUBROGATION, SALVAGE AND RECOVERY
Համաձայնեցվում է, որ Ապահովագրողին, սույնով նախատեսված որևէ կորստի հատուցման պես, կփոխանցվեն նման կորստի առնչությամբ Ապահովագրվողի բոլոր իրավունքները, շահերը և գործողությունների հիմքերը:	It is agreed that the Insurers upon payment of any loss hereunder shall become subrogated to all rights, title, interest and causes of action of the Insured in respect of such loss.
Հատուցումից հետո որևէ կորստի վերականգնման դեպքում, վերականգնված գումարը, նվազեցված այդ վերականգնումն իրականացնելու փաստացի ծախսերի չափով՝ բացառությամբ Ապահովագրվողի սեփական աշխատանքների կամ անձնակազմի ծախսերի, պետք է տնօրինվի հետևյալ հաջորդականությամբ.	In the case of recovery after payment of any loss hereunder, the amount recovered, after deducting the actual cost of obtaining or making such recovery but excluding the Insured's own labor or establishment costs, shall be applied in the following order:
(a) Ապահովագրվողին լրիվ փոխհատուցելու կորուստի այն մասը՝ եթե առկա է, որը գերազանցում է սույն Պայմանագրով փոխհատուցված կորստի գումարը (անկախ ցանկացած կիրառելի Ֆրանշիզայի գումարից):	(a) to reimburse the Insured in full for the part, if any, of such loss which exceeds the amount of loss paid under this Policy (disregarding the amount of any Deductible applicable),
(b) Ապահովագրողին փոխհատուցման համար՝ տարբերությունը կամ ամբողջ գույք վերականգնված գումարը, եթե նման կորստի որևէ մաս չի գերազանցում սույն Պայմանագրով փոխհատուցված կորստի գումարը:	(b) the balance, if any, or the entire net recovery if no part of such loss exceeds the amount of loss paid under this Policy, to the reimbursement of the Insurers,
(c) և վերջապես, Ծրագրում նշված Ֆրանշիզայի հետևանքով Ապահովագրվողի կրած նման կորստի այդ մասի և/կամ բացի սույն Պայմանագրից, որևէ այլ պայմանագրով ծածկված նման կորստի այդ մասի համար:	(c) finally, to that part of such loss sustained by the Insured by reason of the Deductible specified in the Schedule and/or to that part of such loss covered by any policy(ies) of Insurance of which this Policy is excess.
16. ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	16. DEDUCTIBLE

Ապահովագրողը պատասխանատու կլինի միայն Ծրագրի կետ 7-ում նշված համապատասխան Ապահովագրական Հոդվածի համար կիրառելի Ոչ պայմանական չհատուցվող գումարը գերազանցող չափով: Այն դեպքում, երբ ավելի քան մեկ Ապահովագրական Հոդված լինի կիրառելի, կգործի ամենամեծ Ոչ պայմանական չհատուցվող գումարը, որն առնչվում է համապատասխան Ապահովագրական Հոդվածին:	The Insurers shall be liable only in excess of the Deductible of the applicable Insuring Clause stated in Item 7 of the Schedule. In the event that more than one Insuring Clause shall be applicable then the largest Deductible relating to any applicable Insuring Clause shall apply.
Ոչ պայմանական չհատուցվող գումարը կկիրառվի յուրաքանչյուր և ամեն կորստի նկատմամբ, անկախ Պայմանագրի գործողության ընթացքում նման կորուստների քանակի:	The Deductible shall apply to each and every loss, irrespective of the number of such losses during the Policy Period.
17. ԽԱՐԴԱՆՈՒԹՅՈՒՆ	17. FRAUD
Եթե Ապահովագրվողը որևէ հայց ներկայացնի, իրազեկ լինելով, որ այն կեղծ կամ ապօրինի է՝ կապված որևէ գումարի կամ այլ բանի հետ, ապա սույն Պայմանագիրը կկորցնի իր ուժն ու նրա շրջանակներում բոլոր հայցերը կմերժվեն:	If the Insured shall make any claim knowing the same to be false or fraudulent, as regards amount or otherwise, this Policy shall be void and all claims hereunder shall be forfeited